

տուն եւ զմահասպան, զերախտաւորն առ ամենեսեան, զքաղցրն եւ զբազումողորմն<sup>1</sup>:

48 Եւ զայս ամենայն կարիս կրեալ յանձն իւր յաղագս<sup>2</sup> մեր՝ զսոյն<sup>3</sup> եւ իւրոց աշակերտացն ստեալ զգուշացուցանէր, թէ եւ ձեզ դիպելոց է այս ամենայն. յորում մի՛ իբրեւ զանկազմս եւ զանպատրաստ գտեալք հասելոց ի վերայ ձեր վշտացն՝ զանգիտիցէք: 49 Եթէ զիս սիրեցին՝ ապա եւ զձեզ սիրեսցեն. եթէ զիս ընկալան<sup>4</sup>՝ ապա եւ զձեզ<sup>5</sup> ընդունին. ապա թէ զիս հալածեցին՝ եւ զձեզ հալածեն. եթէ<sup>6</sup> զիս ատեցին՝ եւ զձեզ ատեն. եւ եթէ զիս որ տանուտեր էի<sup>7</sup>, Բենդզերուդ կարդացին՝ ո՞րչափ եւս առաւել զձեզ եւ զընտանիս իմ<sup>8</sup>:

50 Դորին նմանեալք<sup>9</sup> ըստ ժամանակի որսացեալ առ նախանձու՝ կուտին եւ<sup>10</sup> ի վերայ իմ բազում բանսարկութիւնս, ասելով, եթէ «Ղազար ասէ, թէ պոռնկութիւն մեղք չեն. զսոյն եւ մարգպանին սաղրէ<sup>10</sup>»: 51 Եւ եթէ ընդէ՛ր այդ այդպէս՝ դու, տեր, քաջ գիտես քան զսուտ կարծողսն: 52 <sup>11</sup>Եւ ընդունէին զեղիս<sup>12</sup> եւ անսուրբ անձինք քաղցր ախորժելով զլուր այդպիսի բանից, ի սատարութիւն բունելոց<sup>13</sup> յինքեանս չար գործոցն:

53 Արդ՝ ո՞ր ոք յանաւրիւնաց, թող թէ ի քրիստոնէից, ի միտս իւր խորհել զայսպիսի ինչ բան, <sup>14</sup>թող թէ եւ առ այլում զայսպիսի շշնջել բանս<sup>15</sup>. ո՞ր անմիտ, ո՞ր տգէտ, ո՞ր Յրեայ, ո՞ր այլազանդ: 54 Եւ Ղազա՛ր զայդ քարոզէր. ո՞ւմ, եւ կամ ո՞ւր, եւ կամ ե՞րբ.- որ տգէ՛տն է գրոց, որ անհրահա՛նգն է յուսմունս, որ մովսիսական արիւնացն աւտա՛ր է եւ քրիստոսատուր շնորհին անտեղեա՛կ: 55 Եւ չիցե՛ն արդեալք արեղեանս Հայոց արժանի ողբոց արտասուաց եւ բազում սգոյ - <sup>16</sup>համբաւել զանպիտանս խաւսել առ նախանձու զանարժանս:

1 SS. զբազմողորմս

2 Վ. Այլ զայս ամենայն կրեալ յանձնէր յաղագս

3 ԲԳտ. զսոյն

4 Ձ. թէ զիս ընկալան

5 ՁSS. զիս ընկալան՝ եւ զձեզ

6 Վ. հալածեն, եւ եթէ

7 Վ. եթէ զիս տանուտեր էի

8 Տե՛ս Մատթ. Ժ 25, 40. Յովհ. ԺԵ 18, 20:

9 Վ. դորին նմանեալք

9 SS. չիք եւ

10 ՁԱտ. մարգպանին սա գրէ. Վ. մարգպանին գրեն. այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.

11 Վ. չիք եւ ընդունէին... չար գործոցն

12 Ձ. զեղիս

13 ՁԱտ. բունելոյ

14 Վ. չիք թող թէ եւ առ այլում... շշնջել բանս

15 SS. բան

16 Վ. չիք համբաւել զանպիտանս... եւ զլոկ պատճառս տենչից (Թուղթ, 66)